# ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՄԱՂԹԱՆՔ

## ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԾՆՆԴՅԱՆ 60-ՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԻ ԱՌԻԹՈՎ

Օգոստոսի 21-ին, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, հանդիսապետությամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի և ներկայությամբ Հայաստանի թեմակալ առաջնորդների և Մայր Աթոռի ողջ միաբանության, մատուցվեց Ս. Պատարագ: Պատարագիչն էր Երևանի Ս. Գրիգոր Լուսավորիչ Մայր եկեղեցու հոգևոր տեսուչ Տ. Անուշավան եպիսկոպոս Ժամկոչյանը:

Պատարագիչ Սրբազան հայրը իր քարոզում որդիական ջերմ սիրով ու խոնարհումով Մայր Աթոռի միաբանության և համազգային ժողովրդի անունից շնորհավորական խոսք ուղղեց Վեհափառ Հայրապետին՝ ծննդյան 60-ամյակի կապակցությամբ՝ մաղթելով կյանքի երկար արևշատ օրեր և բեղուն գահակալություն՝ շարունակելու հաջողությամբ հովվել համայն հայությանը:

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի ծննդյան տարեդարձի առիթով քարոզից հետո Արցախի թեմի առաջնորդ Տ. Պարգև արքեպիսկոպոս Մարտիրոսյանի հանդիսապետությամբ կատարվեց հայրապետական մաղթանք: Եկեղեցականները և համազգային ժողովուրդը հայցեցին Ամենակալ Աստծուն անսասան պահել ու պահպանել Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինն ու նրա արժանընտիր ու քաջամարտիկ գահակալին՝ պարգևելով կորով և զորություն իրականացնելու հայրապետական աստվածահաճո եկեղեցաշեն ծրագրերը ի պայծառություն առաքելահիմն մեր Սուրբ Եկեղեցու և ի մխիթարություն բարեպաշտ մեր ժողովրդի:

Պատարագի ավարտին հոգևորականաց թափորը Նորին Սրբությանն ուղեկցեց Վեհարան, ուր եպիսկոպոսաց դասը և միաբանության անդամները վերստին շնորհավորեցին և իրենց բարեմաղթանքները բերեցին Ամենայն Հայոց Հայրապետին: